

ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵ- ՐԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Սաբինա Մադոյան

ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի անբիռնի հայցորդ

Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը՝ որպես միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք, հաստատվեց ՄԱԿ-ի կանոնադրության մեջ՝ 1945 թ.: Սակայն դեռևս 19-րդ դարում հենց այս իրավունքի իրացումն էր ընկած ազգային պետությունների ստադիան հիմքում, երբ Նիդերլանդներից անջատվեց Բելգիան, Թուրքիայից՝ Հունաստանը, Բուլղարիան, Ռումինիան, Սերբիան, Մոնտենեգրոն և այլք: Իսկ դրանից առաջ՝ 18-19-րդ դդ., Ամերիկյան մայրցամաքում ազատագրական պայքարի շնորհիվ ստեղծվեցին մի շարք նորանկախ պետություններ, այնինչ «ապագադրեացուն» հասկացություն ընդհանրապես գոյություն չուներ: Այլ կերպ ասած՝ այս պետությունները ձևավորվեցին այն ժամանակաշրջանում, երբ միջազգային իրավունքում դեռևս չկար որևէ նորմ, որը սահմանում էր անկախ պետություն ստեղծելու իրավունքը, և այս պետությունների գոյությունը հաստատվեց ստեղծման փաստի ուժով:

Այսօր արդեն, երբ ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է, շարունակվում են վեճերը և տարածայնությունները այս սկզբունքի բովանդակության և կիրառելիության շուրջ: Ավելին, վերջին ժամանակահատվածում աշխարհի տարբեր երկրներում տեղ գտած ինքնորոշման պահանջները առիթ են կրկին անդրադառնալու անկախ պետության ստեղծման խնդրին ապագադրեացման համատեքստից դուրս:

Սեցեսիան կարելի է բնութագրել որպես պետության տարածքի մի մասի անջատում, որը իրականացվում է տվյալ տարածքի մշտական բնակչության կողմից՝ անկախ պետություն ստեղծելու կամ այլ պետության հետ միավորվելու նպատակով: Միակողմանի սեցեսիան պետության տարածքի մի մասի անջատումն է՝ առանց նախորդ սուվերենի (մայր պետության) նախնական համաձայնության: Միջազգային իրավունքի տեսության մեջ հաճախ գործածվում է նաև «դեկլոցիա» տերմինը, որը բնութագրում է այն դեպքերը, երբ սեցեսիան իրականացվում է նախորդ ինքնիշխանի համաձայնությամբ: Սակայն նման տարանջատումը, մեր կարծիքով, այնքան էլ տեղին չէ, քանզի շատ դեպքերում միաժամանակ առկա են և՛ սեցեսիայի, և՛ դեկլոցիայի տարրեր: Մասնավորապես, միջազգային հարաբերությունների պրակտիկայում լինում են դեպքեր, երբ միակողմանի սեցեսիային ի վերջո համաձայնություն է տալիս նախկին ինքնիշխանը, ինչպես օրինակ Ինդոնեզիայի կամ Էրիթրեայի դեպքում, կամ սեցեսիան զուգորդվում է կամ հանգեցնում է մայր պետության փլուզմանը, օրինակ՝ ինչպես Սոցիալիստական Հարավսլավիայի դեպքում¹:

Միջազգային իրավունքի տեսության մեջ և միջազգային հարաբերությունների պրակտիկայում առավել խնդրահարույց է շարունակում մնալ միակողմանի

¹ St' u Crawford J., The creation of states in international law, Oxford 2006, էջ 375:

սեցեսիայի և ինքնորոշման իրավունքի կապը: Նախորդ ինքնիշխանի համաձայնության բացակայության պատճառով որոշ հեղինակներ միակողմանի սեցեսիան համարում են միջազգային իրավունքի նորմերին հակասող:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ այն հիմնական հարցը, որին կվործենք անդրադառնալ, հետևյալն է՝ արդյո՞ք սեցեսիան հակասում է միջազգային իրավունքի նորմերին:

Ինքնորոշման իրավունքի իրացումը կարող է հանգեցնել նաև անկախ պետության ստեղծման: Այս հանգամանքը հստակ արձանագրված է միջազգային իրավական փաստաթղթերում: Սակայն որոշ հեղինակներ շարունակում են պնդել, որ միջազգային իրավունքի տեսանկյունից «ժողովուրդ» եզրույթը վերաբերում է միայն պետության ողջ բնակչությանը, այլ ոչ բնակչության մի մասին՝ հավելելով, որ միայն «ժողովուրդը» ունի ինքնորոշման իրավունք¹:

Այս տեսանկյունից, թերևս, հիմնական միջազգային փաստաթուղթը Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970թ. հռչակագիր է, որը նախ սահմանում է, որ ինքնորոշման իրավունքը կարող է իրականացվել նաև անկախ պետություն ստեղծելով, այնուհետև ընդգծում է. «*Ինքնորոշման իրավունքի վերաբերյալ ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես թույլտվություն կամ խրախուսում որևիցե գործողության, որը կտրոհի կամ ամբողջովին կամ մասամբ կվնասի այն ինքնիշխան և անկախ պետությունների տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը, որոնք գործում են ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա, այնպես, ինչպես դա շարադրված է վերը, և արդյունքում ունեն կառավարություն, որը ներկայացնում է տարածքին պատկանող ողջ ժողովուրդը՝ առանց ռասսայական, կրոնական կամ մաշկի գույնի տարբերակման*»²:

Իհարկե, 1970թ. Հռչակագրի այս դրույթը, կամ ինչպես այն անվանում են մասնագետները 5-րդ սկզբունքի 7-րդ պարագրաֆը, կարելի է մեկնաբանել տարբեր կերպ և զանազան տեսանկյուններից, սակայն բացահայտ է, որ այն չի բացառում սեցեսիայի (անջատման) իրավունքը: Այն, կարելի է ասել, չեզոք է սեցեսիայի հարցում, և անգամ լռելյայն, ոչ բացահայտ ճանաչում է վերջինիս իրավաչափությունը որոշ հանգամանքների առկայության դեպքում. մասնավորապես, երբ պետությունը մերժում է այսպես կոչված «ներքին» ինքնորոշման իրավունքը, խտրական վերաբերմունք է դրսևորում տարածքի ժողովրդի նկատմամբ, և/կամ առկա են մարդու հիմնարար իրավունքների լուրջ խախտումներ: Ի դեպ, այս տեսակետի կողմնակիցն են շատ հեղինակավոր գիտնականներ, ինչպիսիք են Ջ.Կրոուֆորդը, Կասեզեն և այլք³:

Փաստորեն միջազգային իրավունքը չի բացառում «սեցեսիայի իրավունքը», սակայն դա տրամաբանորեն չի կարող պատկանել պետության ողջ բնակչությանը, այլ միայն բնակչության կամ «ժողովրդի» մի մասին: Եվ եթե շարժվենք այն տրամաբանությամբ, որ միջազգային իրավունքի տեսանկյունից միայն պետության ողջ

¹ Տե՛ս, օրինակ՝ **Kohen M.G.**, *Secession*, Cambridge University Press 2006, էջ 9:

² Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Cooperation among States in accordance with the Charter of the United Nations. General Assembly Resolution 2625 (XXV). UN Doc. A/Res/2625 (24 October 1970). Տեղեկությունը հասանելի է՝ www.un-documents.net/a25r2625 կայքում:

³ Տե՛ս **Cassese A.**, *Self-Determination of Peoples: A legal Reappraisal*, Cambridge, Cambridge University Press 1995, էջ118: Տե՛ս Crawford J., *The Creation of States*, Oxford University Press, 2006, էջ 119-128:

բնակչությունն է համարվում «ժողովուրդ», ստացվում է, որ այդ ժողովրդի մի մասն էլ «վերածվում է ժողովրդի», եթե մայր պետությունը վերջինիս նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորում: Այսինքն՝ նման պնդումները ոչ միայն իրավական տեսանկյունից հիմնավորված չեն, այլ նաև անտրամաբանական են:

Ավելին, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969թ. կոնվենցիայի 31-րդ հոդվածի պայմանագրի մեկնաբանման վերաբերյալ պահանջներից («Պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների և դրանց համատեքստում ունեցած սովորույթային նշանակությանը համապատասխան...») ակնհայտ է դառնում, որ անգամ չանդրադառնալով «ժողովուրդ» բառի սոցիալական կամ այլ սահմանումներին՝ պետության բնակչության մի մասն էլ կարող է համարվել ժողովուրդ (ազգային փոքրամասնությունները, նախաբնիկներ և այլն)՝ Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի համատեքստում տեղ գտած «ժողովուրդ» հասկացության սովորույթային նշանակությանը համապատասխան: Մանավանդ որ այս տեսակետը պաշտպանում են ոչ միայն շատ հեղինակավոր գիտնականներ, այլ նաև, օրինակ, Մեծ Բրիտանիայի կառավարությունը¹, այս եզրակացությանն է հանգել նաև Կանադայի Գերագույն դատարանը 1998թ. Քվեբեկի (Կանադայի նահանգ) գործը քննելիս՝ մասնավորապես նշելով. «Պարզ է, որ գոյություն ունեցող պետության բնակչության մի մասն էլ կարող է համարվել «ժողովուրդ»...»²: Այստեղից հետևում է, որ այս տեսակետը արտացոլում է նաև պետությունների պրակտիկայի արդի զարգացումները: Եվ, փաստորեն, «ժամկետանց» են և չեն համապատասխանում ժամանակակից միջազգային հարաբերությունների պրակտիկային որոշ հեղինակների եզրահանգումները առ այն, որ թեև միջազգային-իրավական փաստաթղթերը թույլ են տալիս նաև պետության բնակչության մի մասը համարել «ժողովուրդ», սակայն պետությունների պրակտիկայում «ժողովուրդ» եզրույթը ունի նեղ նշանակություն և վերաբերում է միայն պետության ողջ բնակչությանը³:

Անհեթեթ են նաև շվեցարացի պրոֆեսոր Մարսելո Կոհենի եզրահանգումները առ այն, որ «... ի վերջո անկախ պետության ստեղծման հարցում հաջողությունն է, որ «ոչ ժողովուրդ» համայնքը վերածում է ժողովրդի»⁴: Առավել ևս, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ միջազգային հարաբերությունների պատմության ընթացքում հաճախ հազարամյակների պատմություն և մշակույթ ունեցող ժողովուրդները հայտնվել են տարբեր պետությունների իշխանության ներքո՝ բնականաբար չդադարելով «ժողովուրդ» լինել: Օրինակ Հունաստանը, որն ունի հազարամյակների պատմություն և համարվում է արևմտյան քաղաքակրթության բնօրրանը, 15-րդ դարում կորցրել էր պետականությունը ու մոտ չորս դար գտնվում էր Օսմանյան կայսրության կազմում: Ի վերջո 19-րդ դարի կեսերին ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ հույն ժողովուրդին հաջողվեց վերականգնել անկախությունը (ի-

¹ Agreement between the United Kingdom Government and the Scottish Government on a referendum on independence for Scotland, Edinburgh (15 October 2012). Տեղեկությունը հասանելի է՝ <http://www.gov.scot/About/Government/concordats/Referendum-on-independence> կայքում:

² Reference re Secession of Quebec, Case # 25506 // Supreme Court of Canada (Judgment of 20 August 1998), § 124 . Տեղեկությունը հասանելի է՝ <http://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/1643/index.do> կայքում:

³ Տե՛ս Kohen M.G., Secession, Cambridge University press 2006, էջ 9-11:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 12:

հարկե՛ 19-րդ դ. գերտերությունների աջակցությամբ և ի պատիվ վերջիններիս)¹: Սակայն հույն ժողովուրդը, գտնվելով թուրքական լծի տակ և փաստորեն լինելով ազգային փոքրամասնություն Օսմանյան կայսրության կազմում, բնականաբար չէր դադարել ժողովուրդ կոչվել (առավել և՛ այն չվերածվեց ժողովրդի միայն պետականության վերականգնումից հետո), որն ունի պատմականորեն իրեն պատկանող տարածք, հազարամյակների պատմություն և իրավունք՝ վերականգնելու կորցրած պետականությունը: Մանավանդ ԵԱՀԽ 1975թ. Եզրափակիչ ակտը սահմանում է, որ իրավահավասարության և սեփական ճակատագիրը որոշելու իրավունքը պատկանում է բոլոր ժողովուրդներին և միշտ, այլ ոչ թե միայն անկախ պետականություն ստեղծելուց հետո:

Իսկ ինչ վերաբերում է սեցեսիայի հակասությանը միջազգային իրավունքի նորմերին, ապա այս առումով առավել հետաքրքրական է նաև ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության վերաբերյալ տրված խորհրդատվական եզրակացությունը: Այս գործով Ղատարանը նախ ընդգծեց, որ Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թ. հռչակագիրն ունի սովորության բնույթ, այնուհետև նշեց, որ «*միջազգային իրավունքում գոյություն չունի որևիցե նորմ, որը կարգելի անկախության հռչագրերի ընդունումը*»²: *Դեռ ավելին, Ղատարանը տվյալ գործով նշել էր, որ «18-րդ, 19-րդ և 20-րդ դարերի ընթացքում անկախության հռչակագրերը հաճախ ընդունվել են այն պետության ուժգին դիմադրության պայմաններում, որի մասը կազմում էր անկախություն հռչակած պետությունը: Սակայն պետությունների պրակտիկայում չկա որևիցե դեպք, որ կվկայի, որ անկախության հռչակումը հակասում է միջազգային իրավունքին», և հավելեց, որ «20 դարի միջազգային իրավունքի հիմնական ձեռքբերումներից մեկը ինքնորոշման իրավունքի գարգացումն էր»³:*

Միևնույն ժամանակ, Ղատարանը վերոհիշյալ խորհրդատվական եզրակացությունում չանդրադարձավ ինքնորոշման իրավունքի բովանդակությանը, ինչպես նաև անջատման (սեցեսիայի) իրավունքի գոյությանը և պայմաններին՝ պատճառաբանելով, որ «*այդ հարցերի պարզաբանման անհրաժեշտությունը չկա այս գործում: Գլխավոր ասամբլեան պահանջել է միայն Ղատարանի կարծիքը այն հարցի շուրջ, թե արդյոք Կոսովոյի անկախության միակողմ հռչակումը համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին, թե ոչ*»⁴: Սակայն ակնհայտ է, որ այս գործը փայլուն առիթ էր, որ Ղատարանը՝ որպես հեղինակավոր միջազգային մարմին, որոշակի հստակեցում մտցներ այն հարցերի վերաբերյալ, որոնք, ինչպես հենց Ղատարանը նշեց այս գործով, տարածայնությունների և վեճերի տեղիք են տալիս:

Այսպիսով կարելի եզրակացնել, որ միջազգային իրավունքը, հաստատելով ինքնորոշումը որպես միջազգային իրավունքի համապարտադիր սկզբունք, որը պատկանում է բոլոր ժողովուրդներին, և վերջինս հայտարարելով անկախ պետությունների ստեղծման հիմք՝ չի բացառում տարածքի նկատմամբ տիտղոսի ան-

¹ St' u Протопопов А. С., Козьменко В. М, Елманова Н.С., История международных отношений и внешней политики России 1648-2000, Москва 2001г., էջ 38-40:

² Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, Advisory Opinion // International Court of Justice (2010), §§ 79, 80. Տեղեկությունը հասանելի է՝ <http://www.icj-cij.org/docket/files/141/15987.pdf>. կայքում:

³ Նույն տեղում, § 79.

⁴ Նույն տեղում, § 83.

ցումը մայր պետությունից անջատվող, սեցեսիայի ենթարկվող պետությանը: Այլ չափորոշիչներ անջատման (սեցեսիայի) իրավունքի գոյության և պայմանների վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերում չկան: Այսինքն, միջազգային իրավունքը չի արգելում սեցեսիան. այն ունի չեզոք դիրքորոշում այդ հարցում: Սակայն սա բնավ չի նշանակում, որ բոլոր էթնիկ կամ կրոնական խմբերը իրավունք ունեն անջատում պահանջել՝ վկայակոչելով ինքնորոշման իրավունքը: Ինչպես նշում է Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Քրիստիան Թունաշետը, համաշխարհային քառս կսկավի, եթե, օրինակ, Կամերունի կամ Նիգերիայի (այստեղ բնակվում են մոտ 250 էթնիկ և 120 լինգվիստիկ խմբեր) նման պետությունների էթնիկ խմբերը պահանջեն անջատում¹: Հետևաբար, քանի դեռ գործող միջազգային-իրավական փաստաթղթերը չեն ներառում սեցեսիայի իրավունքի իրականացման լրացուցիչ չափորոշիչներ, որոնք կիստակեցնեն այն պայմանները, թե երբ ազգերի ինքնորոշման իրավունքը կարող է իրականացվել՝ անջատման և անկախ պետության ստեղծման ձևով, բնականաբար ինքնորոշման իրավունքը չի կարող դիտվել որպես սեցեսիայի անսահմանափակ իրավունք բոլոր էթնիկ խմբերի համար և պետք է կիրառվի սահմանափակ դեպքերում: Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ նման չափորոշիչների բացակայությունը ինքնորոշման իրավունքի անհարկի շահարկումների տեղիք է տալիս, և որ ամենամտահոգիչն է, նման պահանջները հաճախ վերածվում են արյունահեղ պատերազմների: Այս առումով խիստ անհրաժեշտ է ունենալ միջազգային լծակներ, որոնք կլուծեն հակասական խնդիրները՝ հաշվի առնելով, իհարկե, ներկայիս մարտահրավերները:

Սեցեսիայի խնդրի ուսումնասիրությունը լիարժեք չի լինի իհարկե, եթե չանդրադառնանք պետությունների ժամանակակից պրակտիկային: Ստորև կքննարկենք արդի ժամանակաշրջանում տեղ գտած երեք սեցեսիայի պահանջի դեպքեր:

Քվեբեկը նախկինում ֆրանսիական գաղութ էր. 1763թ. Ֆրանսիան այն զիջեց Մեծ Բրիտանիային²: Նահանգի բնակչության ճնշող մասը ֆրանսախոս է: Այսօր Քվեբեկը Կանադայի տասը նահանգներից մեկն է: 1976թ. Քվեբեկում ընտրություններին հաղթեց Parti Québécois քաղաքական կուսակցությունը, որի հիմնական նպատակը Քվեբեկի անկախությունն էր Կանադայից: 1980թ. և 1995թ. Քվեբեկում անցկացվեցին անկախության հանրաքվեներ, սակայն նահանգի բնակչության մեծ մասը քվեարկեց «դեմ» (1980թ.՝ 59.6 %, իսկ 1995թ.՝ 50.58%)³: Վերջին հանրաքվեի արդյունքները հիմք հանդիսացան, որ Կանադայի կառավարությունը դիմեր Կանադայի Գերագույն դատարան՝ Քվեբեկի միակողմանի սեցեսիայի վերաբերյալ խորհրդատվական եզրակացության պահանջով: Ղատարանը 1998թ. օգոստոսի 20-ին ներկայացրեց իր խորհրդատվական եզրակացությունը, որտեղ նշեց, որ թեև Կանադայի գործող սահմանադրությունը ոչ արգելում և ոչ էլ թույլատրում է սեցեսիա, սակայն դա կպահանջի սահմանադրական փոփոխություններ, և հավելեց, որ «ժողովրդավարության սկզբունքը» պահանջում է, որ «*լուրջ կշիռ տրվի Քվեբեկի ժողովրդի բացահայտ կամարտահայտությանը Կանադայից անջատվելու հարցում*»⁴:

¹ Տե՛ս **Kohen M.G.**, *Secession*, Cambridge University Press 2006, էջ 29:

² Տե՛ս, օրինակ՝ **Crawford J.**, *The Creation of states in International law*, Oxford 2006, էջ 411:

³ Տե՛ս **Dumberry P.**, *Lessons learned from the Quebec Secession Reference before Supreme Court of Canada*, Kohen M., *Secession*, Cambridge University Press. 2006, էջ 416-453:

⁴ Տե՛ս Reference re Secession of Quebec (1998) SCJ No61, para 87. Տեղեկությունը հասանելի է <http://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/1643/index.do> կայքում:

Այսինքն՝ մի կողմից Կանադայի Գերագույն դատարանը մերժեց սեցեսիայի իրավաչափությունը՝ Կանադայի սահմանադրության հիման վրա, ինչպես նաև սեցեսիայի իրավական հիմնավորվածությունը միջազգային իրավունքի տեսանկյունից, մյուս կողմից՝ շեշտադրեց բոլոր կողմերի պարտականությունը՝ բանակցելու սեցեսիայի պայմանները սահմանադրական փոփոխությունների միջոցով, այն դեպքում, երբ Քվեբեկի բնակչությունը միանշանակ և պարզ ցանկություն հայտնի Կանադայից անջատվելու հարցում: Իհարկե այն հանգամանքը, որ այդ բանակցությունների կողմ են ոչ միայն Քվեբեկի և Կանադայի կառավարությունները, այլ նաև երկրի մյուս նահանգները և «այլ մասնակիցներ»¹, փոքր-ինչ նվազեցնում է համապատասխան սահմանադրական փոփոխությունների հավանականությունը, սակայն, ինչպես հենց Ղատարանն է նշել, մյուս նահանգները և կենտրոնական կառավարությունը չեն կարող բանակցել «այնպես, որ մերժվի Քվեբեկի իրավունքները»²:

Կանադայի Գերագույն դատարանի այս եզրակացությանը, կարելի ասել, որ և՛ Կանադայի, և՛ Քվեբեկի կառավարությունները համարեցին բավականին հավասարակշռված ու հաջողված³: Ավելին, այն իհարկե չբացառեց սեցեսիան, այլ միայն պարտավորեցրեց կողմերին՝ բանակցել Քվեբեկի անկախության շուրջ՝ հաշվի առնելով Քվեբեկի բնակչության իրական ցանկությունները:

Միջազգային իրավունքի տեսանկյունից Կանադայի Գերագույն դատարանի այս եզրակացությունը ևս կարելի է համարել բավականին դրական: Նախ՝ Կանադայի Գերագույն դատարանը սահմանեց, որ պետության բնակչության մի մասն էլ կարող է «ժողովուրդ» հանդիսանալ միջազգային իրավունքի տեսանկյունից: Երկրորդ՝ Կանադայի Գերագույն դատարանը չբացառեց սեցեսիան ապագադրթացման համատեքստից դուրս և անդրադարձավ այն հանգամանքներին, որոնց առակայության դեպքում միակողմանի սեցեսիան իրավաչափ է: Երրորդ՝ Ղատարանը թեև նշեց, որ միջազգային իրավունքը ո՛չ թույլատրում է, ո՛չ էլ արգելում սեցեսիան, և բացահայտ չանդրադարձավ պետությունների պարտավորությանը՝ հարգել և խրախուսել ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացումը, սակայն Ղատարանի շեշտադրած պետության պարտականությունը՝ լուրջ կշիռ տալ Քվեբեկի ժողովրդի բացահայտ կամաարտահայտությանը՝ Կանադայից անջատվելու հարցում և չմերժել վերջինիս իրավունքները, ոչ այլ ինչ է, քան ժողովուրդների ինքնորոշման իրավունքը հարգելու և խրախուսելու պետությունների միջազգային պարտավորության հաստատում: Իսկ ինչ վերաբերում է Ղատարանի մատնանշած ժողովրդավարության սկզբունքին, ապա ականհայտ է, որ իրական ժողովրդավարության կարևորագույն բաղադրատարրերից է հարգանքը ժողովուրդների ինքնորոշման իրավունքի նկատմամբ: Այսպիսով կարելի ասել, որ թեև Կանադայի Գերագույն դատարանի վերոհիշյալ խորհրդատվական եզրակացությունը միջազգային իրավունքի աղբյուր չէ, այլ լոկ ներպետական դատարանի խորհրդատվական

¹ Ղատարանի «այլ մասնակիցներ» արտահայտությունը հավանաբար ուղղված է Կանադայի տեղաբնիկ ժողովուրդներին, քանզի Ղատարանը իր եզրակացության մեջ ամենուրեք շեշտում է, որ «տեղաբնիկների շահերը պետք է հաշվի առնել»: Reference re Secession of Quebec, 1998 SCJ No61, para 96, 139: Տեղեկությունը հասանելի է՝ <http://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/1643/index.do> կայքում:

² Տե՛ս Reference re Secession of Quebec, 000 1998 SCJ No61, para 93: Տեղեկությունը հասանելի է՝ <http://scc-csc.lexum.com/scc-csc/scc-csc/en/item/1643/index.do> կայքում:

³ Տե՛ս օրինակ, P. Dumberry « Lessons learned from the Quebec Secession Reference before Supreme Court of Canada», M. Kohen, Secession, Cambridge University Press 2006, էջ 416-453:

կարծիք է, սակայն կարող է կարևոր նախադեպ դառնալ ժամանակակից աշխարհում սեցեսիայի վերաբերյալ վեճերի կարգավորման հարցում: Մասնավորապես, Կանադայի Գերագույն դատարանը հատուկ շեշտեց բանակցությունների կարևորությունը, բարի կամքի դրսևորումը և սեցեսիայի գործընթացի իրականացումը ժողովրդավարության և փոքրամասնությունների իրավունքների հարգման սկզբունքների հիման վրա:

Վերջին շրջանում միջազգային հարաբերությունների առավել քննարկված իրադարձությունների թվին է պատկանում Շոտլանդիայի անկախության վերաբերյալ հանրաքվեն, որը տեղի ունեցավ 2014թ. սեպտեմբերի 18-ին: Հանրաքվեի հարցը մեկն էր՝ արդյո՞ք Շոտլանդիան պետք է դառնա անկախ պետություն, թե՞ ոչ: Հանրաքվեին կարող էին մասնակցել Շոտլանդիայի՝ 16 տարին լրացած բնակիչները, և նրանց մեծամասնությունը՝ 55,3%-ը, անկախությանը դեմ քվեարկեց: Արդյունքում Շոտլանդիան շարունակեց մնալ Մեծ Բրիտանիայի կազմում¹:

2011թ. Շոտլանդիայի պառլամենտական ընտրություններում հաղթեց Շոտլանդիայի ազգային կուսակցությունը (SNP- Scottish National Party), որի հիմնական նպատակն էր 300 տարի առաջ կորցրած անկախության վերականգնումը: 2012թ. հոկտեմբերի 15-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ղեվիդ Կեմերոնը և Շոտլանդիայի առաջին նախարար Ալեքս Սալմոնդը Էդինբուրգում ստորագրեցին համաձայնագիր (Edinburgh Agreement)՝ Շոտլանդիայի անկախության վերաբերյալ հանրաքվե անցկացվացնելու շուրջ: Այս համաձայնագրով երկու կառավարությունները պայմանավորվեցին մասնավորապես, որ «այդ հանրաքվեն պետք է արդար քննություն լինի և ներկայացնի Շոտլանդիայի ժողովրդի հստակ կամասարտահայտությունը», և հավելեցին, որ «...այդ հանրաքվեի արդյունքները պարտավոր են հարգել բոլորը»²:

Այլ կերպ ասած՝ վերոհիշյալ համաձայնագիրը հաստատեց, որ Շոտլանդիան կարող է անկախ պետության վերածվել միայն Շոտլանդիայի ժողովրդի որոշիչ կամասարտահայտության դեպքում, այսինքն՝ հիմնված լինի Շոտլանդիայի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման վրա: Ու թեև այս փաստաթղթում «ինքնորոշում» եզրույթը որևիցե տեղ չի գործածվում, սակայն Մեծ Բրիտանիան իրական ժողովրդավարական պետությանը հարիր «արժանապատվությամբ» հաստատեց իր միջազգային-իրավական պարտականությունը՝ հարգել այդ իրավունքը և խրախուսել դրա իրացումը, եթե անգամ նման իրացումը հանգեցնի պետության տարածքի սեցեսիայի:

Այս առիթով առավել դիպուկ արտահայտվեց Կատալոնիայի կառավարության նախագահ Արտուր Մասը՝ վերոհիշյալ հանրաքվեն անվանելով «Մեծ Բրիտանիայի կողմից ողջ աշխարհին տրված ժողովրդավարության դաս»³: Այլ կերպ ասած՝ Մեծ Բրիտանիայի կառավարությունը չփորձեց իրավական և քաղաքական խոչընդոտներ ստեղծել շոտլանդական ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հարցում, այլ ժողովրդավարական ամենատարածված և հայտնի մեթոդով՝ հանրաքվեի

¹ Տեղեկությունը հասանելի է՝ <https://www.gov.uk/government/topical-events/scottish-independence-referendum/about#what-was-the-process> կայքում:

² Agreement between the United Kingdom Government and the Scottish Government on a referendum on independence for Scotland, Edinburgh (15 October 2012). Պայմանագրի տեքստը հասանելի է՝ <http://www.scotland.gov.uk/About/Government/concordats/Referendum-on-independence> կայքում:

³ Տեղեկությունը հասանելի է՝ <http://www.catalanviews.com/node/115> կայքում:

անցկացմամբ, կատարեց իր պարտականությունը՝ հարգել և խրախուսել ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացումը: Մասնավորապես, Մեծ Բրիտանիան աշխարհին մեկ անգամ ևս ապացուցեց, որ ժողովրդավարությունը չի ավարտվում դեմագոգիական ճառերով և պառլամենտական երգիծական բանավեճերով, այլ ենթադրում է լուրջ քայլեր՝ ուղղված պետության միջազգային-իրավական պարտականությունների կատարմանը, այդ թվում, իհարկե, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարգման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում: Ու թեև միջազգային-իրավական ձևակերպումները շատ դեպքերում ընդհանուր են, երկիմաստ և ոչ բավականին հստակ, սակայն ժամանակակից իրական ժողովրդավարության չափորոշիչները պահանջում են, որ դրանք մեկնաբանվեն բարեխղճորեն և համատեքստի սովորությամբ նշանակությանը համապատասխան, այսինքն՝ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969թ. կոնվենցիայի 31 հոդվածի պահանջներին հարիր:

Կատալոնիան որպես անկախ պետություն հիմնադրվել է 1640թ., սակայն 1714թ. Իսպանիայի թագավոր Ֆիլիպ IV-ը նվաճում է այն և միացնում իր պետությանը¹: Այսօր Կատալոնիան Իսպանիայի 17 ինքնավար մարզերից մեկն է:

2013թ. հունվարին Կատալոնիայի պառլամենտը ընդունեց հռչակագիր Կատալոնիայի ինքնիշխանության մասին (The Catalan Sovereignty Declaration), որը հայտարարում է, որ Կատալոնիան ինքնիշխան է, և որ կատալոնացիները իրավունք ունեն ընտրելու իրենց քաղաքական ապագան: Սակայն Իսպանիայի Սահմանադրական դատարանը 2014թ. մայիսի 25-ին այս հռչակագիրը անվավեր ճանաչեց²: 2014թ. Կատալոնիայի պառլամենտը դիմեց Իսպանիայի կառավարությանը՝ ինքնորոշման հանրաքվե անցկացնելու լիազորությունների պահանջով (ինչպես Շոտլանդիայի դեպքում), սակայն Իսպանիայի կառավարությունը մերժեց: Ի վերջո 2014թ. սեպտեմբերի 27-ին Կատալոնիայի նախագահը ստորագրեց հրամանագիր Կատալոնիայիում անկախության վերաբերյալ քվեարկություն անցկացնելու մասին: Իսպանիայի Սահմանադրական դատարանը 2014թ. սեպտեմբերի 29-ին որոշեց կասեցնել այդ հրամանագիրը: Սակայն Կատալոնիայի նախագահը 2014թ., հոկտեմբերին հայտարարեց նոր քվեարկություն անցկացնելու մասին՝ ազատ և դեմոկրատական ճանապարհով որոշելու իրենց երկրի ապագան³: Չնայած Իսպանիայի կառավարության առարկություններին՝ 2014թ. նոյեմբերի 9-ին Կատալոնիայում անցկացվեց քվեարկություն, որի մասնակիցների 80.76 տոկոսը «կողմ» քվեարկեց անկախությանը, 4.54 տոկոսը՝ «դեմ»: Այս փաստը Իսպանիայի վարչապետը անվանեց «քաղաքական ֆարս» և հավելեց, որ «*ինքը կքննարկի ցանկացած հարց՝ բացի Իսպանիայի միասնականությանը վերաբերող հարցերից*»⁴: Իսպանիայի կառավարությունը ոչ միայն հանրաքվեն համարում է հակասահմանադրական, այլև անգամ չի ցանկանում բանակցել Կատալոնիայի ներկայացուցիչների հետ Կատալոնիայի անկախության շուրջ:

Այս իրավիճակը հանգեցրեց այն բանին, որ 2014թ. նոյեմբերին Եվրոպայի, Իս-

¹ Տեղեկությունը հասանելի է՝ <http://www.cataloniavotes.eu/history/> կայքում:

² Նույն տեղում:

³ Տեղեկությունը հասանելի է՝ <http://www.cataloniavotes.eu/why-a-independence-referendum-incatalonia/> կայքում:

⁴ Նույն տեղում:

պանիայի և Կատալոնիայի պառլամենտների երկու հարյուրից ավելի անդամներ որոշեցին Իսպանիայի կառավարության դեմ բողոք ներկայացնել միջազգային կազմակերպություններ՝ ՄԱԿ, Եվրոպական պառլամենտ, Եվրոպական հանձնաժողով, Եվրոպայի խորհուրդ, ԵԱՀԽ: Նրանք մեղադրում են Իսպանիայի կառավարությանը կատալոնական ժողովրդի ինքնորոշման իրավունքը մերժելու համար, և խնդրում են միջազգային կազմակերպություններին՝ քայլեր ձեռնարկել, որ Կատալոնիայի բնակչությունը հնարավորություն ունենա որոշելու իր ապագան: Նրանք նշում են. «21-րդ դարում ինքնորոշման իրավունքի իրացումը պետք է թույլ տա ժողովուրդներին՝ ժողովրդական ճանապարհով որոշելու իրենց ապագան»: Այս փաստաթուղթը ստորագրել են 1.4 միլիոն կատալոնացիներ:

Իհարկե Իսպանիայի դիրքորոշումը եզակի չէ, այս խնդիրն ունեցող պետությունների մեծ մասը բացասական և «խանդուկ» վերաբերմունք է դրսևորում սեփական տարածքի սեցեսիայի նկատմամբ: Միևնույն ժամանակ, ինչպես նշել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանը Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում. «18-րդ, 19-րդ և 20-րդ դարերի ընթացքում անկախության հռչակագրերը հաճախ ընդունվել են այն պետության ուժգին դիմադրության պայմաններում, որի մասը կազմում էր անկախություն հռչակած պետությունը: Սակայն պետությունների պրակտիկայում չկա որևիցե դեպք, որը կվկայի՝ անկախության հռչակումը հակասում է միջազգային իրավունքին¹»: Իսկ որ դեպքերը կարող են զարգանալ այնպես, որ անկախության հռչակագիրն ընդունվի առանց Իսպանիայի համաձայնության, չի բացառում նաև Կատալոնիայի կառավարությունը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ, չնայած հակադիր դիրքորոշումներին, Իսպանիան և Կատալոնիան շարունակում են հավատարիմ մնալ համամարդկային, եվրոպական արժեքներին և փնտրում են ստեղծված իրավիճակի բացառապես խաղաղ, քաղաքական լուծում:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարելի է ասել, որ սեցեսիայի պահանջներ այսօր հնչում են աշխարհի գրեթե բոլոր ծայրերում, այդ թվում՝ նաև եվրոպական շատ պետություններում: Որքան էլ որ պետությունների դիրքորոշումները սեցեսիայի նկատմամբ տարբեր են, այնուամենայնիվ մի բան անվիճելի է. ոչ բոլոր սեցեսիայի պահանջները պետք է և կարող են ավարտվել սեցեսիայով, սակայն ոչ բոլորը պետք է մերժվեն: Քանզի, ինչպես նշում է հայտնի անգլիացի պատմաբան Արնոլդ Թոյնբին, «համատեղ անվտանգությունը առանց տարածքային փոփոխությունների նման կլինի ջրատաքացուցիչ սարքի՝ առանց պաշտպանիչ փականի, որտեղ ջուրը մշտապես եռալու է, և ի վերջո կպայթի»²:

Իհարկե կարելի պնդել, որ և Կանադայի Գերագույն դատարանի որոշումը, և՛ Մեծ Բրիտանիայի ու Շոտլանդիայի միջև համաձայնագիրը զուտ ներպետական ակտեր են, որոնք որևիցե նշանակություն չեն կարող ունենալ այլ պետությունների համար: Սակայն պատմության մեջ քիչ չեն դեպքերը, երբ պետությունների ներպե-

¹ Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, Advisory Opinion // International Court of Justice (2010), § 79. Տեղեկությունը հասանելի է՝ <http://www.icj-cij.org/docket/files/141/15987.pdf> կայքում:

² Տե՛ս **Kasowicz A.M.**, Peaceful territorial change, University of South Carolina Press 1994, էջ 32:

տական ակտերը լուրջ ազդեցություն են ունեցել միջազգային իրավունքի հետագա զարգացումների վրա: Մասնավորապես, ԱՄՆ-ի 1787թ., Ֆրանսիայի 1791թ. և 1793թ. սահմանադրությունները, Ֆրանսիայի մարդու և քաղաքացու իրավունքների 1789թ. և միջազգային իրավունքի 1795թ. հռչակագրերը ամրագրում էին միջնադարին ոչ բնորոշ ժողովրդավարական մոտեցումներ, որոնք հետագայում լուրջ ազդեցություն ունեցան ոչ միայն միջազգային իրավունքի ընհանուր սկզբունքների ձևավորման վրա, այլ նաև իրենց արտացոլումը գտան մի շարք կարևորագույն միջազգային-իրավական փաստաթղթերում¹: Եվ այս առումով, իհարկե, Կանադայի և առավել ևս Մեծ Բրիտանիայի մոտեցումները կարող են կարևոր ու լուրջ նախադեպ դառնալ սեցեսիայի հետ կապված շատ այլ պահանջների լուծման հարցում: Մասնավորապես, ինչպես ցույց է տալիս այս պետությունների փորձը, անկախության հանրաքվեի անցկացումը դեռևս չի կանխորոշում վերջինիս ելքը, ինչը ևս մեկ անգամ ապացուցում է այն տեսակետը, որ ժողովուրդները նախընտրում են ապրել ժողովրդավարական կայուն ավանդույթներ ունեցող պետություններում՝ վստահ, որ հետագայում ևս իրենց ինքնորոշման իրավունքը չի մերժվի՝ անգամ սեցեսիայի պահանջների դեպքում:

ПУТИ РЕШЕНИЯ ОСНОВНЫХ ПРОБЛЕМ, СВЯЗАННЫХ С РЕАЛИЗАЦИЕЙ НАРОДАМИ ПРАВА НА САМООПРЕДЕЛЕНИЕ В СОВРЕМЕННОЙ ПРАКТИКЕ ГОСУДАРСТВ

Сабина Мадоян

Соискатель Кафедры европейского и международного права ЕГУ

Статья посвящена изучению проблемы осуществления народами права на самоопределение и создания независимого государства в современном мире. На основании анализа международно-правовых документов, правовой позиции Международного суда ООН и практики государств обосновывается мысль о том, что международное право не исключает возможности создания независимого государства, как способа осуществления народами права на самоопределение. В качестве важных прецедентов в урегулировании проблем, связанных с требованиями независимости, автор рассматривает практику Великобритании и Канады.

¹ Տե՛ս, օրինակ՝ **Бекяшев К.А.**, Международное право, 5-е изд., Москва, изд.«Проспект» 2010, էջ 78-80:

THE WAYS TO SOLVE THE MAIN PROBLEMS ASSOCIATED WITH THE IMPLEMENTATION OF THE RIGHT OF PEOPLES TO SELF-DETERMINATION IN THE MODERN PRACTICE OF STATES

Sabina Madoyan

PhD Student of the YSU Chair of European and International Law

The article is dedicated to the research of the problem of exercising the right to self-determination and creation of an independent State in the contemporary world. Through detailed analysis of international legal documents, the legal position of The International Court of Justice and practice of States, has been proved the idea that International Law doesn't exclude the creation of a new state as a form of exercising the right to self-determination. The practice of Great Britain and Canada is seen as important precedents for settlement of problems dealt with independence requests.

Բանալի բառեր – ժողովուրդների ինքնորոշման սկզբունք, անկախ պետության ստեղծում, միջազգային իրավունք, սեցեսիա, Շոտլանդիայի անկախության վերաբերյալ հանրաքվե 2014թ., Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970թ. հրչակագիր

Ключевые слова: принцип самоопределения народов, создание независимого государства, международное право, сецессия, референдум в Шотландии 2014 год, Декларация о принципах международного права, касающихся дружественных отношений и сотрудничества между государствами 1970 года.

Key words: the principle of self-determination, the creation of an independent State, International Law, secession, Scotland referendum 2014, Declaration on Principles of International Law 1970.